

ՀԱՅԿ ԿԵՍՈՅԱՆ

ՀՀ արդարադատության նախարարության
աշխատակազմի կազմակերպական-իրավական
վարչության առաջին կարգի մասնագետ,
ՀՀ Պետական կառավարման ակադեմիայի
իրավագիտության ամբիոնի ասպիրանտ



**ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ
ՀԱՎԱՍԱՐԱԿՇՈՒՄԱՆ ՄԿՁԲՈՒՆՔԻ
ՉԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՅՄԱՆ
ՊԱՏՄԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ**

Հոդվածի շրջանակներում պատմաիրավական վերլուծության է ենթարկվել ժամանակակից կարևորագույն սահմանադրական սկզբունքներից մեկի՝ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի պատմաիրավական ձևավորումը և զարգացումը: Դեռևս աստվածաշնչյան մի շարք դրույթներում հնարավոր է գտնել թագավորական իշխանությունից անկախ գործող դատավորների: Հույն և Հռոմեացի մտածողները առաջարկում էին կառավարման խառը մոդելը, որի դեպքում հնարավոր կլինեին խուսափել մեկ մարմնի ձեռքում իշխանության կենտրոնացումից և միաժամանակ ապահովել մասնակցային կառավարում: Իշխանությունների բաժանման սկզբունքը առավել ամբողջական զարգացավ 17-18-րդ դարերում, երբ Ջ. Լոկը, Մոնտեսքյուն, Ջ. Մադիսոնը և այլ առաջադեմ մտածողներ Անգլիայում, Ֆրանսիայում և Ամերիկայում առաջացած քաղաքական ճգնաժամերը հաղթահարելու նպատակով տարբեր մոտեցումներով և առանձնահատկություններով հանդերձ առաջ քաշեցին իշխանությունների բաժանման տեսությունը:

Հիմնաբառեր - խառը կառավարում, իշխանությունների բաժանման սկզբունք, օրենսդիր իշխանություն, գործադիր իշխանություն, ֆեդերատիվ իշխանություն, դատական իշխանություն:

Իշխանությունների բաժանման և հավասարակշռության սկզբունքի (այսուհետև՝ իշխանությունների բաժանման սկզբունք) գաղափարի ձևավորման ժամանակի վերաբերյալ միակարծություն չկա. որոշ տեսաբաններ այն կապում են Ջ. Լոկի և Մոնտեսքյոյի գաղափարների հետ, մյուսները ավելի հեռու են գնում և կապում են հույն և հռոմեացի մտածողների գաղափարների հետ, երբեմն նաև աստվածաշնչյան դրույթների:

Իշխանությունների բաժանման սկզբունքի աստվածաշնչյան հիմունքներ: Ռ. Պասլյանը¹, Ռիժկովը և Կրյալինան² նշում են, որ իշխանությունների բաժանման սկզբունքը ունի աստվածաշնչյան արմատներ: Այս գաղափարը առավել ամբողջական զարգացրեց Պ. Բարենբոյնը «Պետական իշխանության բաժանման աստվածաշնչյան արմատները» աշխատությունում, որտեղ հեղինակը նշում է, որ իշխանությունների բաժանման սկզբունքի հիմնական նպատակն է խթանել իշխանության ճյուղերի միջև հավասարակշռությունը և զսպել չհավասարակշռված պաշտոնյաների ձգտումները:

Թագավորական իշխանությունից անկախ դատական գործառույթի մասին գրել են նաև այլ մտածողներ: Հ. Հերցոգը նշում է, որ Դեբորան վայելում էր արդար դատավորի համբավ, ով նստում էր ծառի տակ և լուծում էր տարաբնույթ վեճեր, այդ գործընթացը կազմակերպում էր հրապարակայնորեն:

Ըստ Հերցոգի՝ այս դատավարությունը համարվում է պատմությանը հայտնի ամենաժողովրդավարական դատավարությունը:

Լ. Հենկին գրում է, որ Հին կտակարանը և ԱՄՆ-ի սահմանադրությունը իրավական փաստաթղթեր են: Սահմանադրությունները, ոչ միշտ են կարգադրողական, երբեմն սահմանում են լավագույն գաղափարները ու խոստումները: Ըստ Հենկիի՝ և՛ Աստվածաշունչը, և՛ սահմանադրությունը պարտավորեցնում են քաղաքական իշխանություններին և միաժամանակ գործիք են քաղաքական իշխանությունը զսպելու համար: Եթե այն ժամանակ թագավորը սահմանափակված էր աստվածաշնչյան դրույթներով, ներկայումս ուժեղ նախագահը և կոնգրեսը սահմանափակված են սահմանադրությամբ: Ալեքսանդր Մենը, նշում է, որ աստվածաշնչյան մի շարք դրույթներ ուղղված են բացարձակության, դոգմատիզմի և անսահմանափակ թագավորական իշխանության դեմ և քաջալերում են պայքարը ինքնակալական իշխանության դեմ: Այսպես վերլուծելով վերոնշյալ հեղինակների տեսակետները՝ կարող ենք նշել, որ աստվածաշնչյան դրույթներում հնարավոր է գտնել թագավորական իշխանությունից անկախ դատական գործառույթի մասին գաղափարները:

Պետական կառավարման կազմակերպման խնդիրները անտիկ շրջանի մտածողների գաղա-

www.journal.lawinstitute.am

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

փարձեցում: Հույն և հռոմեացի մտածողները կառավարումը բաժանում էին ճիշտ և սխալ ձևերի: Պլատոնը ճիշտ էր համարում թագավորի օրինական իշխանությունը, օրինական ազնվապետությունը և օրինական ժողովրդավարությունը, իսկ սխալ էր համարում բռնատիրությունը, օլիգարխիան և անօրինական ժողովրդավարությունը: Ըստ Պլատոնի՝ կառավարման ճիշտ ձևերի հիմքում ընկած են չափավորությունը և փոխհամաձայնությունը, իսկ իշխանության կենտրոնացումը միապետի կամ սենատի ձեռքում հանգեցնում է բռնապետության⁸:

Արիստոտելը նույնպես բաժանեց կառավարումը ճիշտ և սխալ ձևերի, համաձայն որի՝ ճիշտ ձևերն են միապետական կառավարումը, արիստոկրատական կառավարումը և հանրապետական կառավարումը, իսկ սխալ ձևերն են բռնատիրությունը, օլիգարխիան և ժողովրդավարությունը: Արիստոտելը պետությունում առանձնացնում է երեք մարմիններ՝ խորհրդակցական, մագիստրատուրական և դատական: Սրա վերաբերյալ Կրասնովը գրում է, որ չնայած Արիստոտելն առանձնացրեց երեք մարմիններ, սակայն նա չի անդրադարձնում այդ մարմինների միջև փոխհարաբերությունների և վերահսկողության իրականացման խնդիրներին⁹: Ըստ Արիստոտելի՝ պատերազմի, արդարադատության և խորհրդատվության գործառույթները պետք է պատկանեն առանձնացված խմբերի. երբ նույն անձը միաժամանակ ծառայում է որպես զինվոր, գյուղատնտես է և արհեստավոր, ապա ձախողվում է:

Վ. Ներսիսյանցը Պլատոնի և Արիստոտելի գաղափարների վերաբերյալ նշում է, որ նրանք հիմնական շեշտը դրել են ոչ թե աշխատանքի կազմակերպման ձևերի, այլ դրանց կրողների՝ սոցիալական շերտերի վրա. տարբեր շերտերի մեջ աշխատանքի արդար բաժանման հիման վրա իշխանության կազմակերպման մեջ էին տեսնում օրինականության ռեժիմի հնարավորությունը¹⁰:

Պոլիբիոսը առանձնացրեց կառավարման երեք պարզ ձևեր՝ միապետություն, արիստոկրատիա և դեմոկրատիա. այսպիսի դասակարգման հիմքում, ըստ Պոլիբիոսի, ընկած է կառավարում իրականացնող մարմինների քանակը: Միապետությունում կառավարում է մեկ հոգի՝ միապետը, արիստոկրատիայի կառավարման դեպքում կառավարում է մի խումբ՝ արիստոկրատները, իսկ դեմոկրատիայի դեպքում կառավարում են շատերը՝ ժողովուրդը: Ըստ Պոլիբիոսի՝ կառավարման այս երեք ձևերը ժամանակի ընթացքում այլասեռվել են. միապետությունը դարձել է բռնապետություն, արիստոկրատիան՝ օլիգարխիա, դեմոկրատիան՝ ամբոխավարություն, և պատմական զարգացման ընթացքում հաջորդում են միմյանց: Ըստ Պոլիբիոսի՝ կառավարումը պետք է իրականացվի տարբեր

մարմինների միջոցով, որի դեպքում միապետը, արիստոկրատների ժողովը և ժողովրդական ժողովը համատեղ կգործեն. այս ձևով իշխանությունը չի կենտրոնանա մեկ մարմնի կամ անձի ձեռքում:

Յիցերոնը նշում է, որ թագավորը հեշտությամբ կարող է դառնալ բռնապետ, արիստոկրատիան կարող է վերածվել օլիգարխիայի, իսկ զանգվածային կառավարումը՝ ամբոխի: Ըստ Յիցերոնի՝ կառավարման մեջ պետք է համադրել կառավարման տարբեր ձևերի տարրերը, որի դեպքում հնարավոր կլինի կանխել այդպիսի ձևախեղումները¹²:

Այսպես՝ անտիկ շրջանի մտածողները մտածում էին այնպիսի կառավարման մասին, որի դեպքում կառավարումը իրականացվի ոչ թե մեկ հոգու՝ թագավորի, այլ նաև արիստոկրատների ժողովի և ժողովրդական ժողովի կողմից համատեղ. միայն այս ձևով հնարավոր կլինի ապահովել տարբեր խմբերի ներկայացուցչությունը կառավարման գործընթացում:

Խառը կառավարման մոդելը Հին Հունաստանում և Հռոմում: Անտիկ շրջանի մտածողների առաջարկած մոդելը գաղափարական հենք հանդիսացան Հին Հունաստանում և Հռոմում խառը կառավարման ձևի զարգացման համար: Մ.թ.ա.6-րդ դարում Աթենքում գործում էին բնակիչներից ընտրված հինգ հարյուրի խորհուրդը, ժողովրդական ժողովը, երդվյալների դատարանը և արեոպագր: Հինգ հարյուրի խորհուրդը կազմված էր 500 իմաստուն արժեքներից, ովքեր քննարկում էին կարևոր հարցերը և ներկայացնում էին ժողովրդական ժողովի հաստատմանը: Ժողովրդական ժողովը չափահաս արժեքների հավաքն էր, կառավարման բարձրագույն մարմինը, որը ընտրում էր արքունիսին և դատավորներին: Արեոպագրը ազդեցիկ մարմին էր, որը կարող էր վերացնել ժողովրդական ժողովի որոշումները և վերահսկել հինգ հարյուրի խորհրդի և պաշտոնյաների գործողությունները: Որոշ հեղինակներ Աթենքի կառավարման մոդելում տեսնում են իշխանությունների բաժանման տարրեր, համաձայն որի՝ հինգ հարյուրի խորհուրդը կատարում էր գործադիր իշխանության գործառույթ, ժողովրդական ժողովը՝ օրենսդիր իշխանության, իսկ արեոպագրը՝ բարձրագույն դատական իշխանության¹³: Աթենքը դեմոկրատական պոլիս էր: Հունական մեկ այլ քաղաքում՝ Սպարտայում, նույնպես ստեղծվել էր կառավարման զարգացած համակարգ. երկիրը կառավարում էին 30 արիստոկրատներից կազմված ավագների խորհուրդը, խորհրդի անդամ էին նաև 2 թագավորները, հազվադեպ հրավիրվում էր ժողովրդական ժողով, որը ընտրում էր խորհրդի անդամներին և հաստատում էր կարևոր որոշումներ: Սպարտան արիստոկրատական պոլիս էր:

Հին Հռոմում կառավարումը բաժանվում է երեք շրջանների՝ թագավորության, հանրապետության և

միապետության¹⁴: Թագավորության շրջանում խառնված էին ռազմատոհմական և պետական իշխանության տարրերը՝ թագավորը և սենատը: Իշխանության գլուխը թագավորն էր, ով միաժամանակ զորքի հրամանատարն էր, քրմապետն էր և բարձրագույն դատավորը, ով ընդունում էր օրենքներ, իսկ կարևորագույն գործերը քննելիս հանդես էր գալիս որպես գերագույն դատավոր: Կառավարման մյուս մարմիններն էին սենատը կամ ավագների խորհուրդը:

Հանրապետության շրջանում կառավարման մարմիններն էին թագավորը, ժողովրդական ժողովը, սենատը և մագիստրատուրան¹⁵: Ժողովրդական ժողովը չափահաս հռոմեացիների հավաքն էր: Սենատը համարվում էր խորհրդակցական մարմին, որի հետ խորհրդակցում էին մագիստրատները, սակայն հանրապետության շրջանում սենատի լիազորությունները դուրս եկան խորհրդակցական մարմնի շրջանակներից: Այդ շրջանում սենատը իշխանության մարմինների համակարգում կատարում էր հավասարակշռման դեր. մի կողմից զսպում էր ժողովրդական ժողովի պոռթկումները, մյուս կողմից մագիստրատների կամայականությունները: Գործադիր իշխանությունը իրականացնում էին պաշտոնատար անձիք՝ մագիստրատները, որոնք ընտրովի պաշտոնյաներ էին և պատասխանատու էին ժողովրդական ժողովի առջև:

Գիկտատուրայի ձևավորմամբ սկսվեց միապետական կառավարման շրջանը, երբ Սուլլան դիմեց սենատին և առաջարկեց պետությունում կարգուկանոն հաստատելու նպատակով բոլոր լիազորությունները, հանձնել մեկ մարմնի: Սուլլան ժողովրդական ժողովի կողմից նշանակվեց դիկտատոր, ժողովրդական ժողովը դադարեց գործել, և նրա լիազորություններն անցան սենատին:

Հռոմում Հանրապետական կառավարման շրջանում կառավարման մեխանիզմները բավական կանոնակարգված էին, իսկ պետական մարմինների միջև գործառույթները՝ որոշ չափով առանձնացված: Սրա վերաբերյալ Գ. Դանիելյանը նշում է, որ իշխանությունների բաժանման սկզբունքն անցել է հասարակական-քաղաքական մտքի զարգացման երկարատև ճանապարհ. սաղմնային վիճակում այն կարող ենք հանդիպել Արիստոտելի, Պլուտինի և հայացքներում, ընդ որում՝ Հանրապետական Հռոմում այն նաև գործնականում կիրառվում էր:

Այսպես՝ Հին Հռոմում և Հունաստանում գործում էր կառավարման խառը ձևը, որի հիմքում ընկած է դասային ներկայացուցչության գաղափարը, որի հիմնական նպատակն էր կառավարման մասնակից դարձնել հասարակության տարբեր խմբերի անդամներին. այս գաղափարները հետագայում զարգացան Ջ. Լոկի և Մոնտեսքյոյի աշխատություններում:

Քաղաքական իրավիճակը Անգլիայում, Ջ. Լոկի իրավաբանական հայացքները, խառը կառավարումից անցում իշխանությունների բաժանման տեսություն: Եվրոպայում 15-16-րդ դարերում իշխանության կազմակերպման հիմքում ընկած էր կառավարման խառը մոդելը: Ֆ. Կերնը առանձնացնում է այդ շրջանում գործող խառը կառավարման մոդելին բնորոշ երեք սկզբունք. թագավորի իշխանությունը օրենքով սահմանափակված է, թագավորը իր որոշումները համաձայնեցնում է ժողովրդի հետ և թագավորը իրավական առումով պատասխանատու է: Միաժամանակ հեղինակը նշում է, որ այս սկզբունքները չէին կիրառվում, և հիմնական պատճառը չգրված սովորույթային նորմերի և մշակույթի պակասն էր¹⁷, ինչը հանգեցրել էր թագավորական անսահմանափակ իշխանության: Չնայած այն հանգամանքին, որ միապետին կից գործում էին դասային ներկայացուցչական մարմիններ, սակայն դրանք հիմնականում խորհրդակցական բնույթ ունեին և զբաղվում էին օրենսդրական գործունեությամբ, իսկ կենտրոնական իշխանությունը ամբողջությամբ կենտրոնացված էր միապետի ձեռքում:

16-17-րդ դարերում Անգլիայում գործող կառավարման խառը մոդելը վերածվել էր թագավորական անսահմանափակ իշխանության: Արտոնյալ ազնվականությունը, թագավորական իշխանությունը և եկեղեցին խոչընդոտում էին երկրի զարգացմանը. թագավորը սահմանում էր կամայական հարկեր, առևտուրը դարձնում առանձին խմբի մենաշնորհը: Այդ շրջանում գերիշխում էր թագավորական իշխանության աստվածային ծագման տեսությունը, համաձայն որի՝ Աստծո իշխանությունից բացի այլ իշխանություն չկա, որը երկրի վրա ներկայացված է թագավորական իշխանության ձևով¹⁸: Այս տեսության կողմնակիցները սրանով հիմնավորում էին թագավորական իշխանության արդար գոյությունը: Սակայն իրավիճակը Անգլիայում աստիճանաբար հեղափոխական էր դառնում:

Անգլիական պառլամենտը փորձում էր ընդարձակել իր մասնակցությունը երկրի կառավարմանը և այդ պատճառով 17-րդ դարում թագավորական իշխանության նկատմամբ դարձավ ընդդիմություն: Չարլզ 1-ինը ցրեց պառլամենտը և որոշեց միայնակ կառավարել, սակայն 1641թ. ստիպված էր նոր պառլամենտ հրավիրել, որն ընդունեց «Մեծ բողոք» փաստաթուղթը, որտեղ նշված էին այն որոշումները, որոնք խանգարում էին պետության զարգացմանը: Սա 1642-1649թթ. հանգեցրեց քաղաքացիական պատերազմի, որի արդյունքում թագավորը գլխատվեց:

1660թ. Անգլիայում միապետությունը վերականգնվեց, Չարլզ 1-ինը և Հակոբ 2-րդը փորձեցին վերականգնել բացարձակ միապետությունը և անտեսել պառլամենտին: Պառլամենտը 1679թ. ընդու-

նեց «Հաբեաս կորպուս ակտ», որի հիմնական նպատակն էր քաղաքացիներին պաշտպանել իշխանության կամայական գործողություններից:

Անգլիայում տեղի ունեցող այս գործողությունների արդյունքում ակնհայտ դարձավ, որ գործող կառավարման մոդելը անարդյունավետ է, և անհրաժեշտ է զարգացնել կառավարման կազմակերպման նոր մեխանիզմները. այդպիսին հանդիսացավ իշխանությունների բաժանման գաղափարը, որը մի կողմից մրցակից էր գործող խառը կառավարման ձևին, իսկ մյուս կողմից զարգացնում էր այն:

Ջոն Լոկի իրավաբանական հայացքները իշխանությունների բաժանման տեսության վերաբերյալ: Ջ. Լոկը (1632-1704) «Զաղաքացիական կառավարման մասին երկու երկ» աշխատության 12-13-րդ գլուխներում փորձում է հաշտեցնել գործող կառավարման խառը մոդելը իշխանությունների բաժանման տեսության հետ: Նա առանձնացրեց իշխանության երեք ճյուղեր՝ օրենսդիր, գործադիր և ֆեդերատիվ, որտեղ օրենսդիր իշխանությունը սահմանում է օրենքներ, գործադիրը կատարում է օրենքները և պատժում է: Միաժամանակ Լոկը առանձնացրեց ֆեդերատիվ իշխանությունը, որի հիմնական խնդիրն էր հայտարարել պատերազմ և խաղաղություն, դաշինքներ կազմել և գործարքներ կնքել:

Լոկը օրենսդիր իշխանությունը համարում էր իշխանության բարձրագույն ճյուղը և նշում էր, որ ոչ ոք չի կարող ընդունել օրենքներ՝ օրենսդիր իշխանությունից բացի, միաժամանակ օրենսդիրը իրավունք չունի օրենքներ ընդունելու լիազորությունը հանձնել այլ մարմնի: Լոկը առանձնացրեց օրենսդիր իշխանության գործունեության երեք հատկանիշներ. օրենսդիր իշխանությունը պետք է գործի հաստատված, հրապարակված օրենքների հիման վրա, օրենքերը պետք է մշակվեն մարդկանց բարեկեցությունն ապահովելու նպատակով, և առանց անձանց համաձայնության օրենքները չպետք է բարձրացնեն գանձվող հարկերը: Թեպետ Լոկը օրենսդիր իշխանությունն առավել բարձր էր համարում իշխանության մյուս ճյուղերից, այնուամենայնիվ նշում է, որ այն սահմանափակված է իր բարձրագույն նպատակով, այն է՝ պաշտպանել մարդկանց կյանքը, ազատությունը և սեփականությունը: Լոկի կարծիքով օրենսդիր իշխանությունը չպետք է մշտապես գործի և պետք է միստեր հրավիրի միայն այն ժամանակ, երբ կա օրենք ընդունելու անհրաժեշտություն, իսկ գործադիր իշխանությունը պետք է միշտ ակտիվ լինի, որովհետև օրենքները պետք է մշտապես կատարվեն:

Լոկի առաջարկված գաղափարները երբեմն քննադատվել են. Կրասովը նշում է, որ չնայած Լոկը իշխանությունը բաժանեց երեք ճյուղերի, սակայն չնշեց, որ դրանք պետք է լինեն առանձին ձեռքերում, ինչպես նաև դատական իշխանությունը

չառանձնացրեց գործադիր իշխանությունից²¹: Մյուս կողմից՝ Ս. Էրվին²² և Գվեյնը²³ նշում են, որ Լոկը իշխանության երեք ճյուղերը չի համարում հավասար և ոչ էլ նշում է անկախության մասին: Կ. Էռնեսթը Լոկին անվանում է «Անգլիական պետության կեղծ տեսության հիմնադիր»²⁴: Ի հակադրություն այս տեսակետի՝ Վալը գրում է, որ ներհամակարգային հարաբերությունները նույնպես քննարկվում են Լոկի աշխատությունում, և այն չի սահմանափակվում միայն իշխանության մեխանիկական բաժանման սահմանմամբ²⁵:

Լոկի տեսակետները գաղափարական հենք հանդիսացան այլ հեղինակների կողմից իշխանությունների բաժանման տեսության զարգացման համար: Ջ. Լևսոնը կառավարման գործառույթները բաժանեց երեք մասի՝ օրենքներ ստեղծելու, օրենքները կատարելու և վեճերը լուծելու. դրանով նա մերժում էր խառը միապետական կառավարման մոդելը²⁶: Իշխանությունների բաժանման տեսությունը զարգացավ նաև Վ. Բլեքսթոնի կողմից: «Անգլիական օրենքի մեկնաբանություններ» աշխատությունում Բլեքսթոնը նշում է, որ երբ օրենք ստեղծելու և կատարելու գործառույթը վերապահված է նույն անձին կամ մարմնին, այդ գործառույթները միաձուլվում են, այս դեպքում մագիստրատները կարող են ընդունել բռնակալական օրենքներ և կատարել դրանք բռնությամբ, բայց երբ դրանք գտնվում են առանձին ձեռքերում, հնարավոր կլինի խուսափել իշխանության կենտրոնացումից: Ըստ Բլեքսթոնի՝ դատական իշխանությունը պետք է իրականացվի հատուկ մարդկանց կողմից, ովքեր նշանակվում են թագավորի կողմից և զերծ են թագավորական ճնշումներից²⁷:

Լոկի առաջարկված գաղափարները հիմք հանդիսացան Անգլիայում առաջացած քաղաքական ճգնաժամի հաղթահարման համար: Դրա մասին է վկայում այն փաստը, որ ժամանակի ընթացքում Անգլիայում ամրապնդվեց պառլամենտական միապետությունը, և կառավարման հիմնական գործառույթները անցան պառլամենտին, որը բաղկացած էր համայնքների և լորդերի պալատներից: Պառլամենտի ընդունած օրենքները հաստատվում էին թագավորի կողմից և կատարվում նախարարների կաբինետի կողմից: Վերջինս հաշվետու էր ոչ թե թագավորին, այլ պառլամենտին: Դատավորին նշանակում էր պառլամենտը:

Այսպիսով, վերլուծելով Լոկի տեսակետները, կարող ենք նշել հետևյալը՝

- առաջին անգամ գիտական մակարդակով պետական իշխանությունը բաժանեց օրենսդիր, գործադիր և ֆեդերատիվ իշխանության ճյուղերի միջև,

- իշխանությունների բաժանման համակարգում դատական իշխանությունը չառանձնացրեց

որպես իշխանության առաձիճ ճյուղ և դատական գործառնության իրականացումը վերապահեց գործադիր իշխանությանը,

- որպես իշխանության առանձին ճյուղ՝ առանձնացրեց ֆեդերատիվ իշխանությունը, որը ներկայումս իշխանությունների բաժանման դասական եռաթև բաժանման արդյունքում ընդգրկված է գործադիր իշխանությունում,

- իշխանության ճյուղերը միմյանց հավասար չի համարում և նշում է, որ օրենսդիր իշխանությունը առավել բարձր է քան իշխանության մյուս ճյուղերը.

- չի նախատեսում իշխանության ճյուղերի միջև հարաբերությունների կարգավորման զարգացած գաղափարների և հավասարակշռության մեխանիզմներ:

Քաղաքական իրավիճակը ֆրանսիայում, Մոնտեսքյոյի իրավաբանական հայացքները իշխանությունների բաժանման սկզբունքի վերաբերյալ: 18-րդ դարում Ֆրանսիայում գործող բացարձակ միապետությունը Լուի 14-րդի օրոք ավելի ամրապնդվեց՝ «պետությունը ես եմ», սակայն այդ շրջանում աստիճանաբար գերիշխող էին դառնում Մոնտեսքյոյի, Ռուսոյի գաղափարները, ովքեր քննադատում էին տիրող կարգերը և քարոզում էին իշխանության կամայական գործողությունների դադարեցում, իսկ իշխանության հիմք համարում էին ժողովրդի կամքը:

1788-1789թթ. ֆրանսիայում վիճակը կտրուկ վատթարացավ: Իրավիճակը օրհասական էր, հեղափոխությունը՝ հասունացած. թագավորը ստիպված հրավիրեց ընդհանուր ժողով, որը իրեն հռչակեց ֆրանսիական ժողովրդի ներկայացուցիչների ժողով՝ ազգային ժողով, իսկ որոշ ժամանակ անց՝ սահմանադիր ժողով: 1789թ. սահմանադիր ժողովը ընդունեց «Մարդու և քաղաքացու իրավունքների մասին» հռչակագիրը, որի 16-րդ հոդվածում նշված էր՝ այն պետությունում, որտեղ չկա իշխանությունների բաժանման սկզբունք, չկա ազատություն²⁸: 1791թ. Ֆրանսիայի սահմանադրությամբ թագավորական իշխանությունը խիստ սահմանափակվեց, օրենսդիր իշխանությունը վերապահվեց պառլամենտին, գործադիր իշխանությունը՝ թագավորին: Գործում էր նաև անկախ դատական իշխանությունը²⁹: 1795թ. ընդունվեց նոր սահմանադրություն, սակայն կարճ ժամանակ անց՝ 1804թ., Ն. Բոնապարտի գլխավորությամբ ֆրանսիան հռչակվեց կայսրություն:

Մոնտեսքյոյի իրավաբանական հայացքները իշխանությունների բաժանման սկզբունքի վերաբերյալ: «Օրենքների ոգին» աշխատությունում Մոնտեսքյոյն իշխանությունը բաժանեց օրենսդիր, գործադիր և դատական ճյուղերի միջև, որտեղ օրենսդիրը ընդունում է օրենքները, գործադիր իշխանության հիմնական խնդիրն է խաղաղություն

հաստատել և պատերազմ վարել, ուղարկել և ստանալ դեսպաններ, ապահովել հասարակական անվտանգությունը, իսկ դատական իշխանության խնդիրն է պատժել հանցագործներին և լուծել առաջացած վեճերը: Մոնտեսքյոյն նշում է, որ երբ օրենսդիր և գործադիր իշխանությունները միավորվում են նույն ձեռքում, չի կարող լինել ազատություն, որովհետև թագավորը կամ սենատը կարող է ընդունել բռնակալական օրենքներ և կատարել բռնությամբ, եթե դատական իշխանությունը միացված է գործադիր իշխանությանը, կարող է գործել բռնությամբ և ճնշումներով³⁰:

Ըստ Մոնտեսքյոյի՝ գործադիր իշխանությունը պետք է լինի միապետի ձեռքում, որը ունի գործունեության բնական սահմանափակվածություն: Օրենսդիր իշխանությունը իրավունք չունի կատարել գործադիր իշխանության լիազորություններ, սակայն իրավունք ունի քննարկելու, թե օրենսդիր իշխանությունը ինչ ձևով պետք է գործադիր իշխանությունը կյանքի կոչի իր ընդունած օրենքները:

Ի տարբերություն Ջ. Լոկի՝ Մոնտեսքյոյն դատական իշխանությունը առանձնացրեց գործադիր իշխանությունից և նշում է, որ կառավարման տարբեր ձևերում դատարանները ունեն տարբեր կարգավիճակներ. բռնապետությունում թագավորի կամայականությունները համարվում են օրենքի հիմքը, իսկ դատավարությունը կամայական գործընթաց է: Միապետությունում թագավորը գործում է օրենքի հիման վրա, հանրապետությունում կա օրենքի գերակայություն, և դատավորները ընտրվում են ժողովրդի կողմից, ֆիքսված կարճ ժամանակով: Ըստ Մոնտեսքյոյի օրենքները պետք է այնքան պարզ լինեն, որ դատավորը միայն կիրառի և ոչ թե մեկնաբանի դրանք: Դատավորը պետք է լինի ոչ ավելին, քան բերան, որը պետք է արտասանի օրենքի պահանջը և չկարողանա ո՛չ մեղմացնել և ո՛չ էլ խստացնել պատիժը: Միաժամանակ Մոնտեսքյոյն կարևորում էր դատական ընթացակարգերը՝ նշելով, որ արագ որոշումը կարող է լինել էժան և հեշտ, ինչը հատուկ է բռնապետությանը, մինչդեռ սահմանափակ միապետության դեպքում կարող են լինել երկար ձևական քննություններ:

Որոշ տեսաբաններ Մոնտեսքյոյի գաղափարների ակունքները կապում են անտիկ շրջանի մտածողների գաղափարների հետ: Այսպես՝ Մ. Նույլգը նշում է, որ շատ թե քիչ Մոնտեսքյոյն իր ոգեշնչումը ստացել է Արիստոտելի, Պլիլիպիոսի և այլոց գաղափարներից³¹: Որոշ հեղինակներ նշում են, որ Լոկը և Մոնտեսքյոյն չեն հայտնագործել իշխանությունների բաժանման սկզբունք. նրանց արտահայտած գաղափարները ուղղված են եղել թագավորի և պառլամենտի միջև առաջացած կոնֆլիկտի լուծմանը, սակայն դեռևս Հին Հռոմում նույնպես եղել է նմանատիպ կոնֆլիկտ, որի լուծումը փորձել են գտնել Յիցերոնը և Պլիլիպիոսը³²: Վայլը գրում է, որ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Մոնտեսքյոն ճանապարհ հարթեց իշխանությունների բաժանման սկզբունքի համար, որը տարբեր ճանապարհներով զարգացավ Անգլիայում, Ամերիկայում և եվրոպական այլ պետություններում. այն երկար չմնաց որպես անգլիական տեսություն և շուտով դարձավ սահմանադրական կառավարման համընդհանուր սկզբունք³³: Ըստ Ֆիների՝ Մոնտեսքյոն պարզապես մտածում էր, թե ինչպիսի միջոցներ են անհրաժեշտ, որպեսզի սահմանափակի թագավորական իշխանությունը³⁴: Հեգելը Մոնտեսքյոյի «Օրենքների ոգին» աշխատությունը անվանեց հավերժական ստեղծագործություն³⁵:

Մոնտեսքյոյի տեսակետների վերաբերյալ ձևավորվել է նաև ժխտողական վերաբերմունք. այսպես՝ Չ. Էյսմանը³⁶ գրում է, որ «Օրենքների ոգին» աշխատությանը եղել է սխալ մեկնաբանված, որտեղ երբեք չի նշվել իշխանության բաժանման մասին, ոչ այս անվանումով, ոչ մեկ այլ: Ըստ Էյսմանի՝ «Օրենքների ոգին» աշխատությունում խոսք չկա իշխանության ճյուղերի մասնագիտացման և անկախության մասին, որոնք ներկայումս համարվում են իշխանությունների բաժանման կարևոր հատկանիշները:

Այսպես՝ վերլուծելով Մոնտեսքյոյի տեսակետները՝ կարող ենք նշել հետևյալը՝

- մշակեց իշխանության բաժանման դասական եռաթև տեսությունը,

- որպես իշխանության ինքնուրույն ճյուղ՝ գործադիր իշխանությունից առանձնացրեց դատական իշխանությունը,

- ի տարբերություն Լոկի՝ ֆեդերատիվ իշխանությունը չառանձնացրեց գործադիր իշխանության ճյուղից,

- ի տարբերություն Լոկի՝ իշխանության ճյուղերից ոչ մեկին առանձնահատուկ նախապատվություն չտվեց:

Ռուսոն, Ժ. Բոդինը, Թ. Հոբսը, նույնպես քննարկում են կառավարման կազմակերպման հարցերը: Ռուսոն նշում է, որ օրենսդիր իշխանությունն արտահայտում է քաղաքական օրգանիզմի կամքը, իսկ գործադիր իշխանությունը՝ նրա ուժը, քանի որ օրենսդիր իշխանությունը պատկանում է ժողովրդին, հետևաբար նրան է պատկանում նաև պետական կառավարման ձևը ընտրելու իրավունքը, իսկ գործադիր իշխանությունը լիազորված է գործադրելու օրենքները և պահպանելու ազատությունը: Ռուսոյի մի շարք գաղափարներ ամրագրվեցին «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում» և ֆրանսիայի 1791թ. սահմանադրությունում: Երբեմն Ռուսոյին ներկայացնում են իշխանությունների բաժանման տեսության հակառակորդ³⁷, սակայն Չլիբկիներ նշում է, որ Ռուսոն այս տեսության վերաբերյալ բացասական վերաբերմունք չի ունեցել և իրականում մերժում է պետական ինքնիշխանության և ոչ թե իշխանություն-

ների բաժանման գաղափարը:

Ժ. Բոդինը և Թ. Հոբսը պաշտպանում էին անսահմանափակ թագավորական իշխանությունը: Ժ. Բոդինը փորձում է արդարացնել թագավորական իշխանության գոյությունը: Ըստ Բոդինի՝ Աստուծոց հետո ամենաբարձր իշխանությունը սուվերեն թագավորի իշխանությունն է, որին Աստվածը ստեղծել է, որպեսզի կատարի իր հրամանները, մարդիկ պետք է հարգեն ու մեծարեն նրա վեհությունը և լինեն հնազանդ³⁸: Ըստ Բոդինի՝ թագավորին բնորոշ է հետևյալ հատկանիշները՝ օրենք ստեղծելու և հպատակներին պարտավորեցնելու իրավասություն, որը բացառիկ է. թագավորը հայտարարում է պատերազմ և հաստատում է խաղաղություն, որպես գերագույն դատարան՝ լուծել է բողոքներ, նշանակում և ազատում է բարձրաստիճան պաշտոնյաներին, սահմանում և հավաքում է հարկեր, ինչպես նաև հատում է դրամներ³⁹: Այս ամենով հանդերձ՝ Բոդինը չի բացառում թագավորին կից խորհրդակցական մարմնի գոյությունը, բայց միաժամանակ նշում է, որ թագավորը կարող է այնքան իմաստուն և փորձված լինել, որ լինի ամենամեծ խորհրդատուն, և որպես այդպիսին՝ նշում է Լուի 16-րդին և Չարլզ 5-րդին, ովքեր հետևում էին Հուլիոս Կեսարի օրինակին և ոչ-որի չէին վստահում իրենց ծրագրերը⁴⁰: Բոդինը նշում է, որ Միսպետին կից պետք է գործի նաև մագիստրանտների խորհուրդ, որոնք լինում են երեք տեսակի՝ թագավորի մագիստրանտներ, որոնք ենթարկվում էին միայն թագավորին, մագիստրանտներ, ովքեր ենթակա էին թագավորի մագիստրանտներին, և մագիստրանտներ, ովքեր ենթակա էին նախորդ երկու տեսակի մագիստրանտներին. վերջիններս կարող էին հրաման տալ միայն մասնավոր անձանց⁴¹:

Թ. Հոբսը «Լևիաթան» աշխատությունում նշում է, որ թագավորի անձը մարմնավորում է պետությունը: Այս գաղափարը հետագայում զարգացրեց Սպինոզան՝ «Թագավորը հենց բուն պետությունն է», պետական իշխանության բաժանում նշանակում է քայքայել այն, քանի որ բաժանված իշխանությունները ոչնչացնում են միմյանց⁴²:

Այսպիսով՝ Բոդինը և Հոբսը չէին ընդունում իշխանությունների բաժանման սկզբունքը. սրանով փորձում էին պետությունում ապահովել կայունություն, որը պատկերացնում էին բոլոր գործառույթների կենտրոնացմամբ մեկ անձի՝ թագավորի ձեռքում:

Քաղաքական իրավիճակը ԱՄՆ-ում, Ջ. Մադիսոնի, Ա. Համիլթոնի, Ջ. Ջեյի իրավաբանական հայացքերը իշխանությունների բաժանման սկզբունքի վերաբերյալ: 17-18-րդ դարերում Ամերիկայում ստեղծվեցին 13 անգլիական գաղութներ: 1776թ. գաղութները մշակեցին «Համադաշնության հոդվածներ և հավերժ միություն» համաձայնագիրը, որով հիմնեցին ֆեդերատիվ պետություն:

Այնուհետև մշակվեցին նահանգային սահմանադրություններ, որոնք հիմնված էին իշխանության բաժանման սկզբունքի վրա. օրինակ՝ Վիրջինիայի⁴³ սահմանադրությունում նշվում էր, որ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունները պետք է միմյանցից առանձին լինեն:

Աստիճանաբար ակնհայտ էր դառնում, որ նահանգների միջև պետք է լինի առավել սերտ համագործակցություն: Այս հարցում կարևոր նշանակություն ունեցավ «Ֆեդերալիստ» կոչվող 85 հոդվածների շարքը, որի հեղինակներն էին Ա. Համիլթոնը, Ջ. Ջեյրը և Ջ. Մադիսոնը, ովքեր նաև սահմանադիր ժողովի անդամներ էին:

Սահմանադիր հայրերի համար գաղափարական աղբյուր են հանդիսացել նաև անտիկ շրջանի մտածողների գաղափարները: Թ.Ջեֆերսոնը և Ջ. Մադիսոնը ծանոթ են եղել Պոլիբիոսի դատադրություններին: Երբ Մադիսոնը նշում է, որ ամբողջ իշխանության կենտրոնացումը՝ օրենսդիր, գործադիր և դատական, նույն ձեռքում՝ մեկ, մի քանի կամ շատ, ժառանգական, ինքնանշանակված կամ ընտրված, կարող է վերածվել բռնակալական իշխանության, դրանով բացահայտում է Պոլիբիոսի աշխատության ազդեցությունը, քանի որ նույն տերմիններն օգտագործել է նաև Պոլիբիոսը: Ա. Համիլթոնը մտահոգություն է արտահայտում, որ եթե շատ միտվենք դեպի դեմոկրատիա, շուտով կհայտնվենք միապետությունում: Նրա մտահոգության հիմքում ընկած էին Պոլիբիոսի գաղափարները՝ դեմոկրատիան ճանապարհ է հարթում դեպի բռնապետություն:

«Ֆեդերալիստ» հոդվածաշարի 47-րդ համարում Ջ. Մադիսոնը հիմնավորում է իշխանությունների բաժանման տեսությունը և նշում է, որ ամբողջ իշխանության կենտրոնացումը նույն ձեռքում՝ մեկ, մի քանի կամ շատ, ժառանգական, նշանակված կամ ընտրված, կարող է վերածվել բռնապետության⁴⁴:

ԱՄՆ-ի սահմանադրության ընդունումը և իշխանությունների բաժանման սկզբունքը: Գաղութների միջև հարաբերությունները զարգացնելու նպատակով 1787թ. մայիսին հրավիրվեց սահմանադիր ժողով, որին տարբեր նահանգներից ներկայացված էին Վիրջինիան, Բ. Ֆրանկլինը, Ջ. Մադիսոնը, Ա. Համիլթոնը և այլք: Նրանք համակարծիք էին իշխանությունների բաժանման սկզբունքի հարցում և նշում էին, որ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության ճյուղերը այնքան ներդաշնակ պետք է գործեն, որ որևէ մեկը չկարողանա գերիշխել: Սահմանադիր հայրերից Ջ. Ջեյրը հանգզված էր, որ իշխանության ճյուղերը պետք է առհավետ բաժանված լինեն և վերահսկեն միմյանց: Լուսի Ֆիշերը գրում է, որ սահմանադիր հայրերը հասկանում էին իշխանության ճյուղերի միջև զսպումների և հավասարակշռության անհրաժեշտությունը. իշխանու-

թյան ճյուղերի մեխանիկական բաժանումը կհանգեցնի իշխանության մեկ ճյուղի կողմից մյուսի լիազորությունների զավթման⁴⁵: Միաժամանակ գիտակցում էին այն բացառիկ անհրաժեշտությունը, որ պետք է հաշտեցնել երկու տարբեր իշխանություններ՝ նահանգային իշխանությունները և կենտրոնական իշխանությունը:

Երկարատև քննարկումներից հետո 1787թ. սեպտեմբերին ընդունվեց ԱՄՆ-ի սահմանադրությունը, որը հիմնված է իշխանությունների բաժանման և զսպումների ու հակակշիռների սկզբունքների վրա: Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն՝ օրենսդիր իշխանությունը իրականացվում էր Կոնգրեսի կողմից, որը բաղկացած էր սենատից և ներկայացուցիչների պալատից: Գործադիր իշխանությունը վերապահված էր նախագահին, իսկ դատական իշխանությունը՝ գերագույն դատարանին:

Վայլը, քննարկելով Ամերիկայում գործող իշխանությունների բաժանման մոդելը, այն բնութագրում է երկու հատկանիշներով՝ իշխանության ճյուղերի բաժանում և զսպումների ու հավասարակշռության մեխանիզմների առկայություն⁴⁶: Չնայած սահմանադրությունում անմիջականորեն չի նշվում իշխանությունների ո՛չ բաժանման սկզբունքի և ո՛չ էլ զսպումների ու հակակշիռների մասին, սակայն սահմանադրական նորմերի վերլուծությունից ակնհայտ է, որ իշխանության ճյուղերի միջև գործում է զսպումների և հավասարակշռության ճկուն համակարգ, մասնավորապես՝ սենատը առաջարկում է նախագահին նշանակել պաշտոնյաներին՝ ներառյալ գերագույն դատարանի դատավորներին, վավերացնում է նախագահի կողմից կնքված պայմանագրերը, օրենքով սահմանված հիմքերի դեպքում կարող է պաշտոնանկ անել նախագահին, ինչպես նաև կարող է հաղթահարել նախագահի վետոն: Մյուս կողմից՝ նախագահը ստորագրում է կամ վետո է կիրառում օրենսդիր իշխանության կողմից ընդունված օրենքների վերաբերյալ, ապահովում է օրենքների կատարումը, սենատի համաձայնությամբ նշանակում է գերագույն դատարանի դատավորներին և այլ պաշտոնյաների, կնքում է պայմանագրեր: Գերագույն դատարանը օրենսդիր իշխանության կողմից ընդունված օրենքների միջոցով լուծում է առաջացած վեճերը:

Այսպիսով՝ ԱՄՆ-ի սահմանադրությունում զարգացած իշխանությունների բաժանման սկզբունքի վերաբերյալ կարող ենք նշել հետևյալը.

- Պետական իշխանությունը բաժանված է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների ճյուղերի միջև:

- Չնայած սահմանադրության տեքստում անմիջականորեն չի նշվում իշխանությունների բաժանման, զսպումների և հավասարակշռության մեխանիզմների մասին, սակայն այն և՛ կառուցակարգային, և՛ ֆունկցիոնալ առումներով կառուցվում է

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

հենց այս սկզբունքների վրա:

- Իշխանության ճյուղերը հավասար են, և որևէ մեկը գերակայություն չունի մյուս ճյուղի նկատմամբ:

- Օրենսդիր, գործադիր և դատական իշխանության ճյուղերի հարաբերությունների հիմքում ընկած են զսպումների և հավասարակշռության մեխանիզմները:

Այսպիսով, վերլուծելով իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի պատմաիրավական ձևավորումը և զարգացումը՝ կարող ենք նշել, որ իշխանությունների բաժանման սկզբունքը հայեցակարգային առումով զարգացել է դեռևս անտիկ շրջանի մտածողների գաղափարնե-

րում, ովքեր առաջարկում էին կառավարման կազմակերպման խառը մոդելը, որի հիմնական նպատակն էր խուսափել իշխանության կենտրոնացումից և ապահովել մասնակցային կառավարում: 17-18-րդ դարերում Ջ. Լոկի, Մոնտեսքյոյի, Թ. Ջեֆերսոնի գաղափարները հիմք դարձան Անգլիայում, Ֆրանսիայում և Ամերիկայում իշխանությունների բաժանման տեսության զարգացման համար, որով իշխանությունը բաժանվեց օրենսդիր, գործադիր և դատական ճյուղերի միջև, որոնք իրականացնում էին առանձնացված գործառնությունները:

¹ Տե՛ս Raphael A. Papiian, «The Chrisitan roots of contemporary law», Moscow, Norma publishers, 2002, էջ 218:

² Տե՛ս Т.Ф. Кряклина, С.А. Рыжков, “Разделение власти как политико-правовое условие ее стабильности”, Ползуновский вестник N 3, 2006, С. 40, հասանելի էր՝ http://elib.altstu.ru/elib/books/Files/pv2006_03_1/pdf/040kryak.pdf

³ Տե՛ս Peter Barenboim, «Biblical roots of separation of powers». Moscow, 2005., հասանելի էր՝ էջ 31. http://www.florentine-society.ru/pdf/Biblical_Roots_of_Separation_of_Powers.pdf

⁴ Տե՛ս Haim Herzog. «The Heroes of Israel» St. Petersburg. 1992, էջ 21.

⁵ Տե՛ս Henkin L., The constitution and other Holy Writ, human rights and divine commands. the judeo christian tradition and the US Constitution preceed in conference at Anneberg research institute, 1987, էջ 61-62.

⁶ Տե՛ս Christianity for the twenty-first century // The Life and Work of Alexander Men / Elizabeth Roberts and Ann Shukman (eds.). SCM press, էջ 11.

⁷ Տե՛ս Վ. Ներսեսյանց, «Իրավունքի և պետության տեսություն», Երևան, «Նաիրի», 2001թ. էջ 76. հասանելի էր՝ www.eiu.am/files/1007_irav.tesutyun.doc

⁸ Տե՛ս Laws, III, «The Dialogues of Plato», translated by B. Jowett, «Oxford», 1892, էջ 72. հասանելի էր՝ <http://oll.libertyfund.org/titles/767>

⁹ Տե՛ս Краснов Ю.К., “Принцип разделение властей в России”, теория и практика / Ю.К. Краснов // Право и управление. XXI век. 2005. N1. С. 2, հասանելի էր՝ <http://mgimo.ru/files/33210/33210.pdf>

¹⁰ Տե՛ս Нерсесянц, “Платон”, Юрид. Лит., Москва, 1984, С. 71.

¹¹ Տե՛ս F. W. Walbank, «Polybius» (Berkeley: University of California Press, 1990) էջ 135-137, տե՛ս նաև «A Historical Commentary on Polybius» (Oxford: Clarendon Press, 1957), էջ 640, 643-647:

¹² Տե՛ս Цицерон М.Т., “Диалоги о государстве”, Москва, “О законах”, 1996. С. 224.

¹³ Տե՛ս Խրոպանյուկ Վ.Ն., «Պետության և իրավունքի տեսություն». «Գ-ը» հրատ., Երևան, 1997թ. էջ 129-130: հասանելի էր՝ <http://library.anau.am/images/stories/grqer/hasarak/Khropanyuk.pdf>

¹⁴ Տե՛ս Գառնիկ Սաֆարյան, Արմեն Եսայան, «Հռոմեական իրավունք», ուսումնական ձեռնարկ, «Երևան» 2011թ. էջ 35, հասանելի էր՝ http://www.ilp.rau.am/uploads/blocks/0/1/138/files/uch_posobie_safaryan.pdf

¹⁵ Տե՛ս Аннерс Э. “История европейского права”. М.: Издательство НОРМА, 1996. С. 217. <http://www.tstu.ru/book/elib/pdf/2005/kosov1.pdf>

¹⁶ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք», Եր.: ԵՊՀ հրատ., 2008, էջ 151:

¹⁷ Տե՛ս F. Kern, «Kingship and law in the middle ages» 1968, էջ 181, 187, 194, տե՛ս նաև՝ W. Ullman, «Principles of Government and Politics in the Middle Ages» 1966, էջ 22:

¹⁸ Տե՛ս R. Carlyle, A. Carlyle, «A history of medieval political theory in the west», vol.3. էջ 152: Հասանելի էր՝ <http://socserv2.socsci.mcmaster.ca/econ/ugcm/3113/carlyle/MedPolTheory03.pdf>

¹⁹ Տե՛ս J. Locke, «Two Treatises on Government» (P. Laslett, ed. 1970), էջ 380-386:

- ²⁰ Տե՛ս J. Locke, նշված աշխատության էջ 375- 376:
- ²¹ Տե՛ս Краснов Ю.К. նշված աշխատության էջ 2:
- ²² Տե՛ս Marcel Bode, «Political philosophy of John Locke», GRIN Verlag, 2008, էջ 9, հասցնելի էր՝ <https://www.chapters.indigo.ca/en-ca/books/political-philosophy-of-john-locke/9783638018241-item.html>
- ²³ Տե՛ս G.B.Gwyn, «the meaning of separation of powers» 3 (1963).
- ²⁴ Տե՛ս J. W. Gough, «John Locke’s Political Philosophy». London, Oxford university press, 1973, էջ 104:
- ²⁵ Տե՛ս M. Vile, «Constitutionalism and the Separation of Powers», (Oxford University Press 1967,2d ed. 1998), էջ 64. Հասցնելի էր՝ <http://oll.libertyfund.org/titles/677>
- ²⁶ Տե՛ս G. Lawson, «An examination of the political part of Mr Hobbs his Leviathan» London, 1657, էջ 8:
- ²⁷ Տե՛ս Commentaries on the Laws of England in Four Books 7 ed. (1775) Vol 1, էջ 146:
- ²⁸ Տե՛ս National Assembly of France, «Declaration of the rights of man and citizen», 1789, article 16, հասցնելի էր՝ http://www.10thaf.info/Declaration_of_the_Rights_of_Man_and_of_the_Citizen.pdf
- ²⁹ Տե՛ս Constitution of French,1791, title 3, հասցնելի էր՝ <http://wp.stu.ca/worldhistory/wp-content/uploads/sites/4/2015/07/French-Constitution-of-1791.pdf>
- ³⁰ Տե՛ս «The spirit of laws», Charles de Secondat, Baron de Montesqui 1748, translated by Thomas Nugent 1752, kitchen-er 2001, էջ 178, հասցնելի էր՝ <http://socserv2.socsci.mcmaster.ca/econ/ugcm/3113/montesquieu/spiritoflaws.pdf>
- ³¹ Տե՛ս M. Hulliung, «Montesquieu and the Old Regime», Berkeley, University of California Press, 1976, էջ 2:
- ³² Տե՛ս Ratnapala, Suri «John Locke’s Doctrine of the Separation of Powers: A Re-Evaluation» American Journal of Jurisprudence: Vol. 38: Iss. 1, Article 8. 1993, էջ190, հասցնելի էր՝ <http://scholarship.law.nd.edu/ajj/vol38/iss1/8/>
- ³³ Տե՛ս M. Vile, նշված աշխատության, էջ 105:
- ³⁴ Տե՛ս U. Sharma, S.Sharma «Principles and theory of political science» volume 2, «New Delhi», 2007, էջ 548: https://books.google.am/books?id=qdZ3VRRLDrgC&pg=PA547&lpg=PA547&dq=Jean+Bodin++separation+of+power&source=bl&ots=RxOHqiCjJc&sig=a6jyXi_Uf4A1C0kXvh0EuKAv7ul&hl=ru&sa=X&redir_esc=y#v=onepage&q=Jean%20Bodin%20%20separation%20of%20power&f=false
- ³⁵ Տե՛ս Нерсесянц В.С. “Философия права Гегеля”, “Юристь”, Москва,1998, С. 22.
- ³⁶ Տե՛ս Eisenmann Charles, “L’ “Esprit des lois” et la séparation des pouvoirs”, in R. Crraré de Malberg, Mélanges, Paris, Librairie du Recueil Sirey 1933,, էջ 165- 192:
- ³⁷ Տե՛ս Чиркин В.Е. “Государственное управление”, “Юристь”, Москва, 2001, С. 50-51.
- ³⁸ Տե՛ս Jean Bodin .Six books of the commonwealth, translated by M. J. Tooley էջ 40: հասցնելի էր՝ http://www.yorku.ca/commnel/courses/3020pdf/six_books.pdf
- ³⁹ Տե՛ս Jean Bodin. Նշված աշխատության էջ 43-44:
- ⁴⁰ Տե՛ս Jean Bodin. Նշված աշխատության էջ 77:
- ⁴¹ Տե՛ս Jean Bodin. Նշված աշխատության էջ 85:
- ⁴² Տե՛ս Томас Гоббс, “Избранные произведения” Т.1, “Москва”1964, С. 371.
- ⁴³ Տե՛ս Constitution of Virginia, adopted on June 29, 1776. հասցնելի էր՝ <http://www.law.gmu.edu/assets/files/academics/founders/VA-Constitution.pdf>
- ⁴⁴ Տե՛ս Alexander Hamilton, John Jay, James Madison, «The federalist», edited by George W. Carey and James McClellan, the federalist No. 47, էջ 267. հասցնելի էր՝ http://files.libertyfund.org/files/788/0084_LFeBk.pdf
- ⁴⁵ Տե՛ս «Separation of Powers in Russia and Ukraine a comparative perspective conference proceedings», edited by F. Joseph Dresen and William E. Pomeranz Washington, էջ 9, հասցնելի էր՝ https://www.wilsoncenter.org/sites/default/files/OP306_Final.pdf
- ⁴⁶ Տե՛ս Vile, Politics in the USA, 1999, էջ 6. հասցնելի էր՝ http://samples.sainsburysebooks.co.uk/9781134662036_sample_544625.pdf

Այկ Կեսոյան

Аспирант Академии государственного
управления Республики Армения

РЕЗЮМЕ

*Историко-правовые принципы формирования и развития принципа
разделения и уравнивания властей*

В рамках статьи историко-правовому анализу было подвергнуто формирование и развитие одного из важнейших современных конституционных принципов – принципа разделения и уравнивания властей. Еще в ряде библейских положений можно найти судебную функцию, независимую от находящейся в зародышевом состоянии королевской власти. Греческие и римские мыслители предлагали смешанную модель правления, при котором было бы возможно избежать централизации власти в руках одного органа и в то же время обеспечить участие в управлении. Принцип разделения властей достиг большей полноты в XVII – XVIII веках, когда Джон Локк, Монтескье, Дж. Мэдисон и другие известные мыслители в Англии, Франции и Америке, при различиях и особенностях в подходах к преодолению политических кризисов, выдвинули принцип разделения властей.

Ключевые слова: смешанное управление, принцип разделения власти, законодательной власти, исполнительной власти, федеральной власти, судебной власти.

Hayk Kesoyan

PhD Student of Public Administration
Academy of the Republic of Armenia

SUMMARY

*Historical and legal principles of the formation and development of the principle
of separation and balance of powers*

In this article the formation and development of one of the most important modern constitutional principles - the principle of separation and balance of powers has been subjected to historical and legal analysis. Even in some biblical provisions judicial function independent of being in the embryonic state of the royal power can be found. Greek and Roman thinkers offered a mixed model of government in which it would be possible to avoid the centralization of power in the hands of one body, and at the same time to ensure the participation in the management. The principle of separation of powers has reached more fullness in the XVII - XVIII centuries, when John Locke, Montesquieu, J. Madison and other well-known thinkers in England, France and America, with the differences and peculiarities in approaches to overcome the political crisis, put forward the principle of separation of powers.

Keywords: Mixed government, the principle of the separation of powers, legislative power, Executive power, federative power, judicial power.